

- 12 Ի նրմին վայրի նա իսկոյն լըսէր,
Թէ նաւ ինչ անտի փոյթ նաւելոց էր
Առ Ըզմիւռնիայ, ուր նաւ բնդհատ չէր,
Ուստի իւրայօք մըտեալ յայն նաւէր:
- 13 Ժամանեալ նոցա ի յԸզմիւռնիայ
Ի պանդոկի ինչ առնուին ըզկայ.
Ուր գարձեալ Սարգիս բանտեալ յանխընայ
Նստէր շըղթայեալ զերթ զոք սրբիկայ:
- 14 Անդանօր նորուն բարեկամք լըեալ
Թէ Սարգիս բարուն Սառաֆեան գովեալ
կայր անդ շըղթայիւք կալանաւորեալ
Չողային առ նա սրբաիւ թախծացեալ:
- 15 Որոց համբուրեալ զօծեալ աջ նորին՝
Ընդ նոյն փորձանս իւր ցաւակցեալ կային,
Որում նըպաստ, յարգ մատուցանէին,
Ի սիրտ նեղելոյն մեղմով խօսէին:
- 16 Առաջնորդն Հայոց էր անդէն յայնժամ,
Վարդապետ ոմըն կոչեալ Աբրահամ,
Որ քաղկեդոնկաց թէպէտ էր շար կամ,
Այլ ողբայր ըզնա իբրեւ բարեկամ:
- 17 Անդր եւ Մըկրտիչ ուղղափառ բարուն
Աշակերտ ճարպիկ, ժիր եւ բանիբուն
Մեծ Մըխիթարայ Աբրահամ ներհուն
Հայթայթէր ըզնա բանիւ իմաստուն:
- 18 Յայտ է տեղեկաց թէ չէ ինչ դըժուար,
Յաշխարհին Տաճկաց կաշառօք յարմար
Առն բանտելոյ հընարեւ ըղճար
Յունիւ ըզձանօթս յարգելան իւր յար: